



ԺԱՅՐԱՅԵՂ ՄԻՋՈՑ

(ՊՕՏԱՊԵՆԿՕՅԻ)



գոստոս ամսի վերջերին էր. ընկերներս
րիցս շատերը դեռ չէին վերադար-
ձել ամարային արձակուրդից:

Գրողդինը նոր էր ճաշից առնւ
վերադառնում: Մինչև մեծ տան հինգ-
երորդ յարկը բարձրանալը, որտեղ
նա մի փոքրիկ սենեակ էր վարձել,
շատ յոգնեց. նորա թոքերը թոյլ
էին. նա կանգ առաւ վերջին աստի-

ճանի վերայ և մի քիչ հանգստանալուց յետոյ զանգը բա-
շեց. երբ դուռը բացին, նա մտաւ նախասենեակը:

— Չեղ մօտ մի աիկին եկաւ. ասաց տանտիկինը:

— Ցիկի՛ն—հարցրեց Գրողդինը:

— Ուղիղն ասած չգիտեմ, աիկին էր թէ՞ օրիորդ:

— Բայց ո՞վ էր:

— Իսկապէս ես այդ չհարցրի, բայց նա խոստացաւ
կրկին անգամ գալ:

Գրողդինին այդ շատ զարմացրեց, որովհետև նորա մօտ
երբեք կանայք չէին լինում. նա ազգական աիկիներ էլ
չունէր: Միայն այն շրջանում, որ կոչւում էր Վինքնօգնու-

Թեան ընկերութիւնն նա հանդիպում էր երկու ուսանողուհիների, որոնք մանկաբարձութիւն էին սովորում: Նա երբեմն միայն վիճում էր նոցա հետ քաղաքական տնտեսութեան վերաբերեալ հարցերի մասին, բայց մօտիկ ծանօթ չէր հետները:

Գրողդինն ամաչկոտ երիտասարդ էր. նորա արտաքինը պարզ ցոյց էր տալիս այդ Դէմքը բաց վարդագոյն այտերով, կապոյտ աչքերով և բնօրշ ու նուրբ գծերով աւելի շուտ կանացի էր: Քայլուածքի և շարժումներին մէջ կար մի տեսակ զգուշութիւն և մեղմութիւն. կարծես թէ նա միշտ վախենում էր կոպիտ շարժումով որևէ մէկին վիրաւորել: Միջահասակ էր, բարակ ու սիրուն կազմուածքով: Ձեռքերը փոքրիկ էին, մաշերը խարածաշ ու երկար:

Անծանօթ տիկնոջ այցելութիւնը Գրողդինն շատ յուզեց և նա կէս ժամի չափ այնպիսի անհանգիստ դրութեան մէջ էր, որ կարծես թէ այդ այցելութիւնը մի դժբաղդութիւն էր իւր համար: Նա անհամբեր սպասում էր անծանօթ հիւրին, որովհետև չէր սիրում ոչ մի անբացատրելի բան: Նորա սենեակն այնքան փոքր էր, որ անկիւնից անկիւն անց ու դարձ անել չէր կարելի, այդ պատճառով կանգնել էր պատուհանի մօտ և նախասենեակից եկած ամենաթոյլ ձայնին ահանջ էր գնում:

Եւ ահա զանգակի ձայն լսուեց ու տանտիկինը դուռը բացեց:

— Ցանն է՞, հարցրեց մի կանացի ձայն:

— Հիմա տանն է. ա՛յ, այտեղ է, դէպի աջ կողմը...

Գրողդինի սենեակի դուռը բացուեց և ներս մտաւ մի նորաօրիորդ. — ներս մտաւ և անմատահ կանգնեց շէմքի մէջ:

Գրողդինն ուշադրութեամբ նայեց նորա երեսին:

— Դուք է՞ք — զարմացած բացականչեց նա, — օրիորդ Օլգա. բայց անկարելի է...

— Ներեցէք խնդրեմ... Այո, ես եմ. ի սէր Աստուծոյ ներեցէք, — վերին աստիճանի պլալուած ասաց հիւրը այնպիսի թոյլ, բնօրշ երեխայական ձայնով և միևնոյն ժամանակ, երևի յուզմունքից, ինքն էլ չգիտէր թէ ինչու,

շարունակ աշխատում էր աջ ձեռքի ձեռնոցը հանել, որ ոչ մի կերպ չէր յաջողում նորան:

Գրողդինը շուարած կանգնել էր և չգիտեր թե ի՞նչ ասէ:

— Սա է՞ ձեր բնակարանը — հարցրեց հիւրը, յուզմունքից ուրիշ խօսք չգտնելով:

— Այո... նստեցէք խնդրեմ... Ես չէի սպասում, որ դուք կըլինէիք...

— Այո, անսպասելի էր 'ի հարկէ... բայց ես իսկոյն կըպատմեմ:

Նա նստեց. պարզ էր, որ այդ անհրաժեշտ էր. երևի նորա ոտքերը դողում էին. Գրողդինն այդ նկատեց:

— Դուք կարծեմ յուզուած էք. ջուր կամենա՞ք. ճիշտը խոստովանած ես նոյնպէս... նոյնպէս յուզուած եմ:

— Ա՛խ, ջուր հարկաւոր չէ... Լսեցէ՛ք խնդրեմ. դուք մեզ մօտ ապրել էք երեք ամիս միայն և մենք այդ ժամանակամիջոցում երեսուն խօսքից աւելի իրար հետ խօսած չենք. այնպէս որ 'ի հարկէ, զարմանալի է, որ ես ուղղակի ձեզ մօտ եկայ. բայց Մոսկուայում ես ուրիշ ոչ ոքի չեմ ճանաչում:

— Գործի՛ համար էք եկած:

— Ի՛նչպէս թէ գործի համար. մի՞թէ ես գործեր ունեմ. ո՛չ, ես ուղղակի... դէ՛, ուղղակի փախել եմ տանից:

— Փախել է՞ք, ինչո՞ւ համար:

— Գիտեք... ես... ես ուզում եմ ուսում առնել... վաղուց ուզում էի, բայց իմ խնամակալը... նա այդ բանի վերայ նայում է ինչպէս... նա ոչ մի կերպ... սյնպէս որ ստիպուած փախայ...

Գրողդինը նորանից բոլորովին չէր սպասում այդ տեսակ բացատրութիւն. թէև նա ոչինչ էլ չէր սպասում: Անցեալ ամառ նա Սարատովի նահանգում, հրաժարուած գընդապետ Կարելինի կալուածքում, զինուորական վարժարան մտնելու համար պատրաստում էր նորա տղային: Գնդապետն օրիորդ Օլգայի հեռու ազգականն էր և նորա խնամակալը: Գրողդինին դուր էր գալիս այդ աղջիկը, բայց երբէք մաքովը չէր անցնում, թէ այդ օրիորդի գլխի մէջ այդպիսի ձգտումներ և ծրագրներ կարող են լինել: Տան մէջ ամեն ինչ այնպէս էր կարգադրուած, որ նա

մեծ մասամբ լինում էր իւր աշակերտի հետ, իսկ միւս տը-
նեցոց հետ միայն ճաշի ժամանակն էր հանդիպում։ Յերա-
ւի, ջահէլ օրիորդի մեծ ու մոխրագոյն աչքերի մէջ կարծես
մի խորհրդաւոր բան կար և նա շատ անգամ մտածուէնքի
մէջ էր ընկած ու դէպի իւր ազգականները սառն էր։ Գըն-
դապետը, ինչպէս ասում են ծանր մարդ էր.— նուրբ ձեւ-
րի սիրահար, պահանջող, սիրում էր փնթփնթալ ժամա-
նակակից կարգերի վերայ, որոնք իրան դուր չէին գալիս։
պախարակում էր երիտասարդութեան սանձարձակութիւնը
և մանաւանդ շարունակ յարձակում էր կրթուած կանանց
վերայ։ Գրողդինն այն ժամանակ չէր հասկանում այդ տե-
սակ յարձակման պատճառը, բայց այժմ ըմբռնեց. պարզ
էր, որ գնդապետն այդ ամենն ասում էր, որ օրիորդին
խելքի բերէ։ Օրիորդ Օլգան երբէք չէր վիճում նորա հետ
և եթէ որ նորա ճակատի բարակ կնձիռն ու յօնքերի վրայ
բերելը չլինէին, կարելի էր կարծել, որ նա համաձայն է
գնդապետի կարծիքներին։ Հետո Գնդապետի կինը հիւանդու
ու ջղային էր և ամեն անգամ ցնցւում էր, եթէ որ յան-
կարծ հացի գդալն ընկնէր յատակին, կամ թէ ափսէները
չրեկային. մէկ խօսքով տան մէջ առհասարակ մթնօլորտը
ծանր էր...

Գրողդինը տղային պատրաստեց զինուորական ուսում-
նարանի համար և ստանալով իրան խոստացուած վարձա-
տրութիւնը, շատ ուրախացաւ, որ վերջապէս հեռանալու
է այդ տանից և որ կըկարողանայ ազատ շունչ բաշել։ Եւ
ահա նորա առաջն է օրիորդ Օլգան։

— Ուրեմն փախել է՞ք, հարցնում էր նա.— բայց ի՞նչ-
պէս... իսկ գնդապետը, ձեր խնամակալը... թէև ինչու
եմ հարցնում, ի հարկէ նա... նա այդ չի ների... բայց
ի՞նչպէս պէտք է անէք. գիտէ՞ք, որ դա շատ լուրջ բան է...
դուք որեւէ հնար մտածել է՞ք։

Օրիորդը գլուխը շարժեց։

— Ոչ, ես միայն ցանկութիւն ունեմ սովորելու բժշկ
կութիւն. բայց այդ կուրսերը Պետերբուրգում են, իսկ
այնտեղ բոլորովին ոչ ոքի չեմ ճանաչում. թէև ունիմ
այնտեղ շատ նշանաւոր ազգականներ, բայց նոցա մօտ 'ի
հարկէ չեմ գնայ. նորա ինձ կըմամենն... արդէն տարի

ու կէս է պարապում եմ լաթիններէնով և կարող եմ բըն նութիւն բռնել... Ես ուզում եմ ըստիկ լինել. կարծեմ դուք էլ ըստկական բաժնու՞մ եք:

— Զարմանալի է, որ դուք ինձ հետ այդ մասին երբեք չէք խօսել:

— Ես ձեզ հետ ոչ մի բանի մասին չեմ խօսած... և այնտեղ հնար էլ չկար խօսելու... Բայց չէ՞ որ հիմա շատ կանայք սովորում են. մի թէ դուք էլ դորան հակառակ էք ինչպէս և գնդապետը:

— Օ՛, ո՛չ, ինչ է՞ք ասում, ուսում առնելը լաւ բան է. ես ինքս ուսանում եմ. ինչո՞ւ դուք էլ չպիտի ուսանէք. ամեն մարդ էլ իրաւունք ունի իւր միտքը զարգացնելու... Բայց ձեզ կը վերադարձնեն, օրիորդ, ձեր խնամակալն իրարանցում կը հանէ և ձեզ ստիպելով յետ կը տանի:

— Այո, այդ սարսափելի է. գիտէ՞ք, թէ որ իմ հայրըս կենդանի լինէր, նա անպատճառ ինձ թոյլ կը տար այդ քայլն անելու... Նա այնպէ՞ս լաւ մարդ էր. իսկ հիմա ես կախում ունեմ գնդապետից... Ա՛յ, ահա ես ձեզ մօտ եմ եկել. խորհուրդներ տուէք ինձ ի՞նչ անեմ:

— Ես ի՞նչ խորհուրդ կարող եմ տալ. այսպիսի դէպքերում ոչինչ չի կարելի անել: Շատ ժամանակ չէ որ մէկն էլ ձեզ պէս փախել էր տանից. նորա մայրը ծամբովում ներգործական պետական խորհրդական էր և նորան զօռով յետ տարաւ...

— Բայց ի՞նչ անեմ, ի՞նչպէս վարուեմ — և նայեց նորա վերայ այնպէս յուսահատ, այնպէս աղերսալի, որ Գրողինն արդէն շատ խղճաց:

— Գուցէ կարելի է մի որ և է տեղ թագնուել:

— Թագնուել կարելի բան չէ. ոստիկանութիւնը կը գտնի և աւելի վատ կըլինի... Աստուած գիտէ, թէ ինչ կասկածներ կը տանեն ձեզ վերայ. չէ՛, թագնուել անհնարին է:

Նա միտք էր անում, թէ ի՞նչ հնար գտնի... Այդ աղջկան, որին երեք ամիս առաջ ամենեւին չէր ճանաչում, չնայելով որ ամեն օր իրար տեսնում էին, այժմ յանկարծ իրան դուր եկաւ: Գրողինը գիտութեան, զարգացման և ամեն մի լուսաւոր բանի սիրահար և երկրպագու էր: Իւր

ընկերները, թուով տասներկու հոգի ուսումնասիրում էին քաղաքական տնտեսութիւնը Միլլի ուղղութեամբ, նա նոցա շրջանում համարեա երբէք չէր արտայայտում իւր զգացմունքները, մաքրը: Հաղիւ էր պատահում, որ նա իւր կարծիքն յայտնէ մի որեւէ առարկայի մասին. այլ աւելի լսում էր, թէ ինչպէս ուրիշները խօսում են և այդ պէս պատճառով միայն, որ նա իրան համարում էր վատ ճառախօս և ամաչում, բաշւում էր խօսել: Մանաւանդ կանանց կրթութեան ջերմ համակրողներիցն էր. այնպէս որ բաւական էր, որ օրիորդ Օլգան ձգտում էր դէպի բարձր ուսումը և Գրօզդինն արդէն միանգամից մօտիկ առաւ իւր սրտին՝ աղջկայ վիճակը: Այնուհետև սկսեց ամեն տեսակ հնարներ մտածել նորան օգնելու, բայց բոլորն էլ անյաջող:

— Քանի՞ տարեկան էք, օրիորդ, — հարցրեց նա:

— Ցասնեկինը. — պատասխանեց նա:

— Այդ քիչ է, մինչև չափահաս լինելը դեռ երկու տարի էլ կայ:

— Լսեցէ՛ք, — ասաց օրիորդը և նորա երեսպայական երեսն այդ ըոպէին արտայայտում էր մի տեսակ տխուր ու լուրջ բան: — Ես նորից վերագտնալ չեմ կարող... այնտեղ ես կամ կըխելագարուեմ, կամ թէ կըմեռնեմ... այնտեղ ապրելը շատ ծանր է. դուք տեսել էք կարծեմ, թէ ինչպէս ծանր է: Դուք դեռ ամեն բան չգիտէք. գնդապետն ուզում է, որ բոլորն էլ նորա կամքը կատարեն առանց այլևայլութեան... ձեր գնալուց յետոյ նահանգական քաղաքից նորա մօտ գալիս էին ինչ որ դատաբանական ծառայողներ ու նոցանից մէկը, պրօկուրօրի օգնականն ինձ առաջարկութիւն արաւ... խնամակալս անպատճառ ուզում է, որ ես նորան առնեմ: Եւ այդ մարդն այնպէս անդուր է որ...

— Ասում էք պրօկուրօրի օգնական է՞, աւելի վատ, նա կարող է ձեզ փնտսել:

— Գիտեմ, բայց ի՞նչ անեմ:

Գրօզդինը խորը մտածմունքի մէջ ընկաւ. կարծես ամենավերջին ճշնում էր գործ դնում իւր վերայ: Յանկարծ, նա մեծ եռանդով վեր ելաւ տեղից և ասաց՝

— Գիտէ՛ք ինչ. մէկ միջոց է միայն մնում:

—Ի՞նչ, — սիրտ առած հարցրեց օրիորդը:

—Այո՛... բայց դա ամենածայրայեղ միջոցն է: Դուք հարցն այսպէս դրեցիք՝—որ ձեզ տանը դժուար է ապրել, որ դուք աւելի լաւ էք համարում մեռնել... իսկ այդ միջոցը... մէկ խօսքով... դուք պիտի ամուսնանաք...

Օրիորդ Օլգան գլուխը բարձրացրեց և շտկուեց:

—Ի՞նչպէս թէ ամուսնանալ, ո՛ւմ հետ:

—Ում հետ ուզում է լինի, այդ միւսնոյն է...

—Ես չեմ հասկանում... այդ ի՞նչպէս կարելի է:

—Ես չեմ ասում թէ դա հեշտ է... այսինքն շատ հասարակ կերպով կարելի է այդ սարքել—ուզողակի գնալ եկեղեցի և պսակուել, բայց պէտք է... պէտք է որ կարգին մարդ լինի... մէկ խօսքով այնպիսի մարդ, որը... որին կարելի լինի հաւատալ... հասկանում է՞ք...

Օրիորդը նայում էր նորա վերայ շատ զարմացած և երևի մտածում էր թէ, երիտասարդի խելքը գլուխը չէ: Բայց երիտասարդի աչքերն այնքան խելօք, անկեղծ և ազնիւ արտայայտութիւն ունէին և այդ վայրկենին նոցա մէջ երևում էր այնքան հոգատարութիւն ու վճռականութիւն:

—Ա՛յ, դուք զարմացած էք... այն ինչ այստեղ ոչ մի վատ բան չկայ... ձեզ պէտք է հանել նեղ դրութիւնից... մենք բոլորս պարտական ենք միմեանց նեղ վիճակից ազատել... դուք դժուարութեան մէջ էք, հարկաւոր է ձեզ օգնել. եթէ որ ես ձախորդութեան մէջ լինէի, դուք ինձ կազատէի՞ք... Թէև ներեցէք, գուցէ դուք կապուած էք մէկի հետ... որ և է մէկին սիրում է՞ք...

—Ոչ, ոչ, շտապով վրայ բերեց օրիորդը.— ոչ ոքի, ոչ ոքի... Բայց այն մարդը... յետոյ նա կարելի է կը սիրահարուի մէկ ուրիշի վերայ... և կուզենայ պսակուել... այն ժամանակ ի՞նչպէս պէտք է լինի...

—Դէ՛, գիտեք, այդ միւսնոյն է թէ, մէկը խեղդուելու լինի և պէտք համարուի ջուրն ընկնել նորան փրկելու համար, իսկ ես այդ միջոցին մտածեմ՝ ի՞նչպէս ջուրն ընկնեմ և իմ նոր շորերս թրջեմ, բանի որ հիւր պիտի գնամ: Երբ որ հարկաւոր է մարդուն ազատել, այդ տեսակ բաների վերայ էլ չեն մտածի: Վերջապէս օրիորդ, բանի որ դուք եկել էք ինձ մօտ և օգնութիւն էք խնդրում, արդ, միակ

միջոցն է, որ ձեզ առաջարկում եմ: Ես ձեր ձկառուքներին ջերմ համակրում եմ... Թէև աւելի շուտ այդ անում եմ գործի և գաղափարի համար... Եթէ դուք ինձ հաւատում էք, բայց երևի հաւատում էք, որ եկել էք ինձ մօտ, այդ պատճառով... կամենա՞ք ամուսնանալ — ես ձեր խոնարհ ծառան եմ: Ես ոչ մի բանով կապուած չեմ, ոչ որի վերայ սիրահարուած չեմ, դուք նշնպէս. մենք միմեանց չենք խանգարի, պրծա՛ւ, գնա՛ց: Վճռեցէ՛ք, թէ չէ վաղը կարող են ձեզ գտնել և յետ տանել...

— 2գիտեմ — ասաց նա ծանր ձայնով, դեռ էլի ապշած նորա այդ տեսակ տարօրինակ առաջարկութեան վերայ:

— Վճռեցէ՛ք, վճռեցէ՛ք... Ի՛նչ գլխաւորը — հանգըստացէ՛ք, մի քիչ ջուր խմեցէ՛ք... Թէ չէ ճշմարիտ, իսկոյն Լաց կըլինէք:

Եւ ջուր ածեց բաժակի մէջ ու տուեց. իսկ աղջկայ աչքերից արտասուք էր կաթում:

Նա ասաց կամաց ու հեծկլտալով՝

— Ես չէի ուզում... ես ձեզանից այդպիսի զոհաբերութիւն չէի ուզում...

— Թողեցէ՛ք, թէ Աստուած կըսիրէք. ի՞նչ զոհաբերութիւն. մի՞թէ դա զոհաբերութիւն է. վճռեցէ՛ք, մի՛ տատանուէք: Ես ձեզ ազնիւ խօսք եմ տալիս, որ երբէ՛ք ձեր խիղճը և ազաւութիւնը չեմ ճնշի. դուք էլ ինձ այդ կըխոստանաք...

Եւ Գրողդինը բարեկամական ժպիտով իւր ձեռքը մեկնեց օրիորդին, որը ամուր սեղմեց նորան:

— Ե՛, ուրեմն, դուք այստեղ մնացէ՛ք, իսկ ես կըվազեմ... մի կէս ժամում կըհոգանք ամեն ինչ. թէ չէ ձեզ ամեն րոպէ կարող են գտնել... Խնդրեմ հանեցէ՛ք ձեր գլխարկը և այնպէս եղէ՛ք այստեղ, ինչպէս ձեր տանը. շատ է՛ք յոգնել. հանգստացէ՛ք խնդրեմ... չեմ էլ հարցնում երբ է՛ք եկել:

— Այսօր առաւօտ, ամբողջ գիշերը գալիս էի...

— Ուրեմն բաղմոցի վերայ պառկեցէ՛ք. ոչ ոք անհանգիստ չի անի ձեզ... Ա՛խ, զանգահարում են. երևի ինձ են հարցնում. ընկերներս յաճախ լինում են ինձ մօտ...

Նա շապով գդակն առաւ և դուրս վազեց դէպի նա.

խասենեակը: Նորա գլուխն այրւում էր. կարծես ամբողջովին բոցի մէջ էր: Նա ոգևորուող ու կրակոտ բնավորութեան տէր լինելով, թէև այդ յատկութիւնները միշտ էլ ծածկուած էին նորա անվճռող ու ամաչկոտ արտաքինի տակ, այժմ վառւում էր մեծահոգութեան և մերձաւորին զոհաբերութիւն անելու ցանկութեամբ:

Գուռը բացեց և երես առ երես հանդիպեց իւր բարձրահասակ ու մեծ մօրուքաւոր ընկերին, որի հետ միևնոյն կուրսուճե էին և որի ազգանունն էր Սարէլիչ:

— Ի՞նչու ես շփոթուած, հարցրեց Սարելիչը հաստ ձայնով:

— Սարելիչ, գնա՛նք... գործ կայ... և ընկերի ձեռքից բաշելով՝ միասին իջան սանդուխքից:

— Երբէ՞ք ես քեզ այդպէս չեմ տեսել. այդ ի՞նչ ժրարացել ես. — ասում էր Սարելիչը, հազիւ հասնելով նորա ետեւից:

— Լսի՛ր. — ասաց Գրոզդինը, երբ նորա իջան փողոց — դու այդ սարբի՛ր... բայց որքան կարելի է շուտ... այսօր պէտք է...

Սարելիչը մօտը դրեց ճակատին հասկացնելու Գրոզդինին, թէ խելքդ տեղը չէ:

— Ոչ, այդ չէ... ախ, ուղիղ, ես քեզ չպատմեցի... գիտե՞ս բանն ինչու՞նք է՝ ես այսօր պիտի պատկուեմ:

— Ի՞նչ... նչ... դո՛ւ Գրոզդին, դո՛ւ փոքրիկ երեխայ — ծծկեր մանուկ...

Այդ բոլորը փաղաքշական մականուններ էին, որ Սարելիչը հանաքով միշտ ասում էր իւր ընկերոջը:

Այդ հսկան աւելի ջահել էր, քան թէ նորա արտաքինն էր ցոյց տալիս. նա Գրոզդինից երկու տարով էր մեծ. իսկ Գրոզդինը 23 տարեկան էր: Սարելիչի սովորութիւնն էր, ամէն բան հանաքի ձևով ասել:

— 2է՛, ասաց Գրոզդինը — դու լուրջ վերաբերուի՛ր... հասկանում ե՞ս, այդ պէտք է... նա փախել է իւր խնամակալի մօտից. գիտե՞ս պնտեղից, որտեղ ես ամառս դաս էի տալիս: Խնամակալը գնդապետ է, հին հայեացքների տէր մարդ... մարդու է ուզում տալ, իսկ օրիորդը... կամենում է բժիշկ դառնալ... հասկացա՞ր, այսօր պէտք է...

— Գուցէ սիրահարուած է՞ք, կամ թէ...

— Ոչ մի սիրահարութիւն. ես նորան մի երեսուն խօսք հաղիւ ասած լինեմ. բայց նա ինձ դիմեց. նա այստեղ ոչ որ չունի. հասկանում ե՞ս:

— Զ՛ը, ասենք թէ ես հասկանում եմ, բայց միայն... միայն... ի՞նչպէս ասեմ բեղ... Եւ այդպիսի մի դէպք գիտեի... նոյնպէս ի սէր գաղափարի ամուսնացան, իսկ յետոյ օրիորդն այնպիսի ճանկեր ցոյց տուեց... որ տղայի ամբողջ կեանքը թուլաւորեց... Զէ՞ որ այդ աղջկան լաւ չես ճանաչում:

— Ի հարկէ չէ, բայց երևում է, որ ազնիւ ընաւորութեան տէր է... մէկ խօսքով, Ոտրէլի՛չ, խնդրում եմ բեղ, սարբի՛ր, դատողութիւններդ թո՛ղ... մի՞թէ ես տղայ եմ...

Հա՛, դու պատիկ տղայ չես, բայց ծծկեր մանուկ ես:

— Խնդրում եմ...

— Դէ՛հ, լա՛ւ, լա՛ւ... ի՞նչպէս էլ ոգևորուած ես. այդ ո՞րտեղից երևեցաւ քո մէջ... Ե՛հ, ոչինչ, ես այստեղ մի երիտասարդ բահանայի ճանաչում եմ, իմ ընկերներից է... եթէ նորան խնդրեմ և ամեն բան բացատրեմ, երևի կըհամաձայնի... չէ՞ որ սուրբ գործ է... օրիորդը գոնէ իւր ծննդականը հետը վերցրել է՞:

— Չգիտեմ:

— Դէ՞, իմացիր, դու տուն գնա՛, իսկ ես կ'երթամ ճաշարան այնտեղ մարդ կըջոկեմ ներկայ լինելու. չէ՞ որ մատանիներ էլ են հարկաւոր. փող ունի՞ս:

— Միայն երեք ռուբլի ու կէս:

— Բի՛չ է. թէեւ ես էլ մօտ չորս ռուբլի կունենամ. կ'երթամ այստեղ մօտիկ ոսկերչու խանութը և կ'առնեմ արծաթ-ոսկեջրած մատանիներ: Իսկ ես, եղբայր, բեզ մօտ էի եկել այն յոյսով, թէ բեղիարթ կըխաղանք. յետոյ խաղա՞նք, պսակից յետոյ հա՞, հարցրեց Ստրէլի՛չը ծիծաղելով:

— Գո՛ւթեան ժամանակը չէ, Ստրէլի՛չ, րոպէն թանգ է...

— Դէ՛հ, լա՛ւ, լա՛ւ:

Ստրէլի՛չը գնաց, իսկ Գրօղդինը տուն վերադարձաւ: Օրիորդ Օլգան ի հարկէ, բոլորովին չէր էլ մտածել հանգստանալ...

Օրիորդ Օլգան անհամարձակ կերպով բարձրանում էր սանդուխքի վերայով, երբ առաջին անգամ մտաւ Գրողդինի մօտ: Նա այդ երիտասարդին լաւ չէր ճանաչում և գուշակել չէր կարող, թէ ի՞նչպէս կը վերաբերուէր դէպի իրան: Ընդհանրապէս Գրողդինը դուրեկան և կարգին երիտասարդ էր երևում, բայց կարող էր օրիորդը սխալուած լինել և յանկարծ ընդամենը մի քառորդ ժամում հարցն այնպէս լուծուեց, որ նա դառաւ Գրողդինի հարսնացուն: Այդ մաքի հետ հաշտուելը դժուար էր և օրիորդը բոլոր ժամանակ այնպէս էր զգում, կարծես թէ իր հետ կատարւում էր մի ինչ որ կախարդական բան, մի սքանչելի կերպարանափոխութիւն: Բայց Գրողդինը ոգևորութեամբ վարակեց նորան: Ի՞նչպէս հասարակ կերպով էր խօսում նա իւր զոհաբերութեան մասին. նա միանգամայն այն պարզ, բարեկամական յարաբերութիւնը հաստատեց, որ օրիորդի իդէալն էր և որ քաշում էր նորան դէպի մի շրջան, որտեղ մարդիկ ուսանում, զարգանում, կատարելագործւում են և միմեանց համար զոհւում են ամեն ինչ:

Երբ Գրողդինը տուն դարձաւ, օրիորդն իրան արդէն նորա բարեկամն էր համարում և պատմեց նորան իր հետ պատահած արկածները՝ թէ ի՞նչպէս գիշերը ճանապարհ էր գալիս, ի՞նչպէս վախենում էր, որ նրան չբռնեն և այլն:

— Ես եկայ Մոսկուա — ասում էր նա և կարծես ընկայ Բաբելոնի խառնակութեան մէջ: Ոչինչ չեմ հասկանում, ամեն ինչ նոր էր ինձ համար, ամեն բան օտար... Եւ ես վախենում էի, թէ դուք լսել անգամ չէիք կամենայ...

— Իրաւո՞նք չունէիք իմ մասին այդպէս մտածելու, օրիորդ:

— Ճշմարիտ է, բայց հիմայ ես զղջում եմ... բայց... չէ՞ որ ես ձեզ պէս մարդկանց դեռ չեմ տեսել...

— Մենք բոլորս այսպէս ենք. դուք իսկոյն կը տեսնէք իմ ընկերներէից մի քանիսին. մենք բոլորս պարզ ու հասարակ ենք, օրիորդ:

Եւ նա պատմեց Սարգիսի մասին, թէ ինչպէս պատահեց նորան և թէ արդէն գնաց խաչեղբայր գտնելու և մատանիներ առնելու:

Օրիորդը կարմրեց և վերցրեց իւր կաշուէ պայուսակը:

— Խնդրեմ, վերցրէք. ես ունիմ 170 ռուբլի... երկու տարի է, որ հաւաքուեմ էի այդ փողը: Ահա, առէք մատաւնիւների համար:

— Այդ յետոյ Ստրէլիչին կտաք. ես փող չունէի, այնպէս որ նա կառնի:

Նախասնենակուեմ ոտքի ձայն լսուեց և մի քանի երիտասարդներ ներս մտան Ստրէլիչի առաջնորդութեամբ: Նոցա ծանօթացրին օրիորդի հետ:

— Քահանայի մօտ էլ գնացի—բացատրեց Ստրէլիչը— մինչև անգամ նորան ասացի, որ թէյը պատրաստէ. գիտե՞ք թէյը կըլինի «շամպանիայ» ի փոխարէն... իսկ ձեր մետրիքականը վերցրել է՞ք, դիմեց նա օրիորդին:

Օլգան մետրիքականը բերել էր իր հետ:

— Է՛, պարոններ, կարծեմ ոտքով կերթանք եկեղեցի, որ հեռու չէ:

Պահապանն արդէն բաց էր անում փողբիկ եկեղեցին, երբ նոքա մտան նորա բակը. այդտեղ պատահեցին քահանային, որ նայելով օրիորդ Օլգայի շագանակագոյն շրջագգեստի և ճանապարհորդական պայուսակի վերայ, գլուխը շարժեց, բայց բան չասաց:

Մտան ժամ. ժամկոչն արդէն ամեն բան պատրաստել էր պսակի համար. մոմերը վառեցին և պսակի խորհուրդն սկսուեց: Ստրէլիչը, որ սեմինարիայում աւարտողներիցն էր և եկեղեցական արարողութեան լաւ ծանօթ, միացաւ դպրի հետ և սկսեց երգել ու կարգաւ «առաքելոց թղթերից» և կարգալիս մինչև անգամ աշխատեց վերջին խօսքը սմենաբարձր նօթայով ասել:

Օրիորդ Օլգան շարունակ իրան կախարդական աշխարհի մէջ էր զգում: Ուսանելու ջերմ ցանկութեամբ լցուած և վաղուց ծրագրած նպատակներին հասնելու ձգտմամբ, սյդպիսի վճռական քայլից յետոյ, որպիսին էր հայրենական տնից փախչելը, նա էլ ոյժ չունեցաւ գիմադրելու իւր կեանքի ամենանշանաւոր հարցի յանկարծակի վճռին:

Այն պարզ վարմունքը, որ ցոյց էին տալիս դէպի այդ գործը բոլոր շրջապատողները, որոնք այնպէս սիրով ու առանց հարց ու փորձի եկան նորան օգնութիւն հասցնելու, օրիորդին այնպէս գրաւեց, որ նա առանց երկար ու բարակ

մտածելու Գնաց նոցա Խուսից: Օրիորդին թուում էր թէ, մինչև անգամ քահանան համակրեց այդ բանին և առանց որևէ հարց առաջարկելու՝ վճռեց պսակել: Մաքուր ձրգտուճներն ու բարի ցանկութիւնները, որոնք ղեկավարում էին բոլոր ներկայ գտնուող ազնիւ երիտասարդներին, լըցնում էր օրիորդի սիրտն ու հոգին լաւ և բարձր զգացմունքով: Իսկ պսակի խորհրդի մէջ, այդ տեսակ հանգամանքներում, նա պէտք է տեսներ մի ինչ որ օրհասական բան, որ իրան լուրորովին բաժանում էր անցեալից: Եւ երբ քահանան նոցա ձեռքերը միացրեց, իսկ դասից լսուեց տիրացուի բարակ ձայնը Ստրէլիչի դողդողացող, հաստ ձայնի հետ միասին, Օլգան զգաց թէ մեծ շնորհակալութեամբ լըցւում է իւր սիրտը դէպի այն երիտասարդը որ առանց վախենալու, առանց տատանուելու վճռեց զոհել իր ազատութիւնը, իր իրաւունքը, միայն թէ Օլգային հանէր նեղ դրութիւնից և միջոց տար իրագործելու վաղուց փայտայած իղձերը: Շատ կարելի է, որ դեռ երբեք սուրբ սեղանի առաջ չէին կանգնել երկու արարածներ, այնպիսի մաքուր ու բարձր նպատակներով միացած, ինչպէս որ Գրոզդինն ու Օլգան էին:

Պսակը վերջացաւ: Քահանան ելաւ սեղան: Գրոզդինը դարձաւ դէպի օրիորդը և ծիծաղելով ասաց՝

— Այժմ, տիկին Գրոզդինա, շնորհակարութեամբ եմ ձեզ: Օրիորդը լուռ սեղմեց նորա ձեռքը:

Իսկ Ստրէլիչն այդ միջոցին իրար էր անցել և դպրի հետ խօսում էր ինչ որ վկայականի մասին. նա այդ կարգերը լաւ գիտէր և պնդում էր, որ դպիրը իսկոյն գրէ պսակի կատարման վկայականը:

Քահանան էլ դուրս եկաւ և խնդրեց բոլորին գնալ իր մօտ թէյի:

— Ես ու Ստրէլիչը ընկերներ ենք, ասաց նա, երբ նորա դուրս եկան եկեղեցու բակից և ուղղուեցին դէպի եկեղեցուն պատկանող տունը: — Սեմինարիայում միասին էինք սովորում: Միայն նա աշխարհական ասպարէզն ընտրեց, իսկ ես հոգևորական:

Քահանան մայր էլ ունէր. սա ղուգուած դուրս եկաւ հիւրերի առաջ և սիրալիր կերպով սկսեց թէյ շինել:

բոլորի համար: Այդ բոլորին Սարգիսն ինչ որ փսփսաց քահանայի ականջին, սա էլ ծանր ձայնով հաղորդեց մօրը և այնուհետև էլ ոչ մի բան չէին հարցնում: Նորապսակներին նոցա ամուսնանալու մասին, միայն թէ քահանայի մայրը մեծ ուշադրութեամբ շուտ-շուտ նայում էր Օլգայի վերայ: Խօսակցութիւնը բոլորովին ուրիշ առարկաների մասին էր, կարծես թէ այդ օրուայ պսակադրութիւնը չէր պատճառ, որ նոքա հրաւիրուած էին՝ այստեղ, այլ հէնց՝ այնպէս հաւաքուել են ժամանակ անցկացնելու, խօսելու, դատելու:

Հիւրասէր տանտէրերին շնորհակալութիւն անելով, նոքա դուրս եկան փողոց, Գրօզդինը Օլգային կառքը նըստեցնելով հարցրեց՝

— Դուք երևի հէնց վա՞ղը կըկամենաք Պետերբուրգ գնալ:

— Այո՛, կըցանկայի — պատասխանեց օրիորդը. — յոյս ունեմ, որ կըկարողանամ քննութիւն տալ և մտնել...

— Վաշխտեմ ամեն բան ձեռք բերել, ինչ որ ձեզ հարկաւոր է... պէտքէ առանձին անցաթուղթ ստանալ, որ կարողանաք Պետերբուրգում ապրել: Գուցէ ինձ յաջողուի այդ թուղթը վաղէն առնել... Ձեր հասցէն կարծեմ Վենսնիցկի փ. թ. 85 է:

— Այո՛, կահաւորուած սենեակներում:

— Ես վաղը ժամը երեքին կըգամ ձեզ մօտ և եթէ կարողացայ ձեր անցաթուղթն էլ հետս կըբերեմ:

Օրիորդը գլուխ տուեց նորան և գնաց:

— Է՛, եղբայր, ասաց Սարգիսը Գրօզդինին. — Թէև դու հերոս ես, բայց այնուամենայնիւ չպիտի մոռանաս կատարել տուածդ խօսքը. յիշում ե՞ս, թէ ինչու էի ես այսօր քեզ մօտ գալիս:

— Ինչո՞ւ համար, երևակայի՛ր, մոռացել եմ, ասաց Գրօզդինը, որի գլուխը դեռ շփոթութեան մէջ էր:

— Ա՛յ, քեզ բան, հապա բիլիարդ խաղա՞լը, չէ՞ որ համարեա խոստացար:

— Ա՛խ, ուղիղ. դէ՛հ, գնանք, ի՞նչ կայ որ, ես այժմ ազատ եմ:

Բիլիարդ խաղալը Սարգիսի թոյլ կողմն էր. մանաւանդ նա շատ սիրում էր Գրօզդինի հետ խաղալ, որ վատ էր

խաղում և միշտ էլ Ստրելիչին յաղթողի փառքին էր արժանացնում: Ստրելիչի փառասիրութիւնն այդ յաջողութիւնից աւելի բարձր չէր անցնում:

Ես պատմեցի այս դէպքը և յանկարծ իմ մէջ կասկած զարթեց. ինձ թւում է, թէ ընթերցողը չհաւատալով այս պատմութեանը, հեգնօրէն ժպտում է: Այո, շատ տարի չէ, որ մեզ բաժանել է այն ժամանակից, որին վերաբերում է այս դէպքը. բայց այն, ինչ որ այն ժամանակ պարզ էր և ոչ ոքի չէր զարմացնում, այժմ անհաւատալի, մինչև իսկ անկարելի և անիրագործելի է համարւում...

Գրողդինը իւր խօսքը կատարեց: Միւս օրը վաղ առաւօտունից սկսեց վազվզել այս ու այն կողմ, որ իւր կնոջ Օլգայի համար առանձին անցաթուղթ առնի. իսկ երեկոյեան Ստրելիչի և միւս ընկերների հետ, որոնք ներկայ էին իրանց պսակադրութեանը, իւր կնոջը ճանապարհ դրեց դէպի Պետերբուրգ:

Երիտասարդները ճանապարհորդին անկեղծ սրտով բարի ճանապարհ և յաջողութիւն ցանկացան և ամենքն էլ ըզգում էին թէ կարծես շատ տարիներ է, որ նորա հետ ծանօթ և բարեկամ էին:

Շուտով գնդապետի կալուածքում շփոթ և փոթորիկ բարձրացաւ օրիորդ Օլգայի փախչելու առթիւ: Գնդապետն ինքն անձամբ եկաւ Մոսկուա, իմացաւ ինչ որ եղել, կատարուել է և Գրողդինի ու նորա մէջ անբաւականութիւն ծագեց. թէև Գրողդինը քաջութեամբ տարաւ ամեն բան: Այդ քնքոյշ և արտաքուստ թուլամորթ երիտասարդը ցոյց տուեց, որ կամքի մեծ ոյժ է ունեցել: Չնայելով որ գնդապետը շատ սպառնալիքներ թափեց և ամեն կերպ աշխատում էր վախեցնել Գրողդինին, բայց ոչինչ չկատողացաւ անել:

Գրողդինը օրիորդ Օլգայից տեղեկութիւն ստացաւ, որ գնդապետը նորան աւելի դառնութիւններ է պատճառել, բայց թէ նա չէ ընկճուել: Տիկին Գրողդինան իւր ամուսնուց կանոնաւոր վկայական ունէր Պետերբուրգում ապրելու համար, այնպէս որ դորա դէմ էլ վիճել կարելի չէր:

Եւ այդպէս, օրիորդ Օլգան սիրով ու եռանդով շարունակում էր իւր ուսումը: Սկզբում ապրուստի միջոց ձեռք բերելը նորան շատ խանգարում և դժուարութիւնների մէջ էր գցում, ըսյց ժամանակն իւրն արեց՝ գնդապետի չորսիւր տը մեղմացաւ և թէև նա միայն կիսով չափ հաշտուեց կատարուած իրողութեան հետ և դեռ չէր ընդունում Օլգայի ամուսնութիւնը Գրօզդինի հետ, այնուամենայնիւ սկսեց օգնել օրիորդին:

Վեց տարուց յետոյ, մի գաւառական քաղաքում կարելի էր տեսնել Գրօզդին զոյգին, բոնք մեծ ջանքով ու սիրով աշխատում էին այն հիւանդանոցում, որ հիմնել էր նոր կազմակերպուած հասարակական վարչութիւնը:

Ինչպէս նոքա իրար պատահեցին և սկսեցին միասին գործել: Շատերն ասում են, թէև իրանք էլ այդպէս են կարծում, որ այդ պատահական հանդիպումն էր: Գրօզդինն իւր ուսումն աւարտելով Մոսկուայում, մի գործի համար գնաց Պետերբուրգ և այցելեց օրիորդ Օլգային, ինչպէս հին ծանօթի: Ընդհանուր գործը նոցա մօտեցրեց, մտերմացրեց և նոքա միմեանց սիրեցին:

Բայց արդեօք ա՞յդպէս էր:

Նոցա չմիացրե՞ց արդեօք ամուր կապերով այն վայրկեանը, երբ Գրօզդինն առանց աջ ու ձախ նայելու զոհեց օրիորդի համար իւր թանկագին ազատութիւնը, իրաւունքը, իսկ օրիորդ՝ ընդունեց այդ զոհը: Եւ կարելի է, որ իրանք էլ չգիտէին, թէ արդէն վաղուց, նոյն իսկ այն ժամանակից, նոցա սիրտը մղւում էր դէպի միմեանց...

Թարգմ. ՅԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

